ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
"Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ"

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 174, 01.12.2017թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝	բաժնետոմս,	պարտատոմս	պարտատոմս
արժեթղթերի քանակը՝	1,760,731 հատ,	40,000 հատ	280.000 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	5,000 ՀՀ դրամ,	10,000 ՀՀ դրամ	25 ԱՄՆ դոլար

"Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը":

ստորագրող անձինք՝

(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կարեն Հակոբյան	**Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ**		01.12.17
Զարուհի Մելքոնյան	**Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ**		01.12.17
Սուրեն Կարապետյան	**Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ**		01.12.17
Տիգրան Գալստյան	**Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ**		01.12.17
Կարեն Սարգսյան	**Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ**		
Բագրատ Ճզմաչյան	**Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ**		01.12.17
Դավիթ Հարությունյան	**Վարչության անդամ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ**		01.12.17

Ստորագրությունները հավաստում եմ՝

(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Աշոտ Օսիպյան	**Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն**		01.12.17

01 դեկտեմբերի 2017թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

ք.Երևան

Կոդ: ՀՐՄ0201 – N 2092/Ա
Դաս: ԾԳ
«27» նոյեմբերի 2017 թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

ՀՐԱՄԱՆ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի Հոդված 209-ը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21^{10}-ի 3-րդ մասի բ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 14.9-ի կետի բ) ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Ֆինանսական ոլորտի «ԵՎՐԱՍԻԱՅԻ ՖԻՆԱՆՍԱԲԱՆԿԱՆԿԱՅԻՆ ԷԼԻՏԱ» միջազգային մրցանակաբաշխությանը և Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում ՀՀ Կենտրոնական բանկի պայմանավորվածության համաձայն GARP-ի կողմից ՀՀ առևտրային բանկերի համար կազմակերպվելիք "IFRS 9" թեմայով դասընթացին մասնակցելու նպատակով՝ 2017թվականի նոյեմբերի 29-**ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 03-ը** ներառյալ Բանկի գործադիր տնօրեն Աշոտ Օսիպյանին գործուղել ՌԴ մայրաքաղաք Մոսկվա և Ավստրիայի մայրաքաղաք Վիեննա:
2. Բանկի գործադիր տնօրենի պարտականությունների կատարումը 2017 թվականի նոյեմբերի 29-**ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 03-ը** ներառյալ դնել Բանկի գործադիր տնօրենի առաջին տեղակալ Դավիթ Հարությունյանի վրա:
3. Բանկի Հաշվապահական հաշվառման վարչությանը՝ գործուղման հետ կապված ծախսերը կատարելու համար Աշոտ Օսիպյանին տրամադրել անհրաժեշտ առհաշիվ գումար:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Գործադիր տնօրեն՝ **Աշոտ Օսիպյան**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ Բաց Բաժնետիրական ընկերության լրացուցիչ տեղաբաշխված 483,230 հատ սովորական անվանական բաժնետոմսերն ազատ (C) շուկայում առևտրին թույլատրելու մասին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի Գլխավոր տնօրենի 2017 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ԱԹԲ-001-11/17 որոշում («ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի Գլխավոր տնօրենի որոշումը կցվում է):

NASDAQ OMX

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

30 նոյեմբերի 2016 թվականի N ԱԹԲ-001-11/17

ք. Երևան

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ 483,230 ՀԱՏ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՆ ԱԶԱՏ (C) ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՐԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) 2017 թվականի նոյեմբերի 27-ի հայտը՝ 5,000 (հինգ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 483,230 (չորս հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր երեսուն) հատ լրացուցիչ տեղաբաշխված սովորական անվանական բաժնետոմսերն ազատ (C) շուկայում առևտրին թույլատրելու վերաբերյալ, ինչպես նաև «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերություն (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի (Առևտրին թույլատրող հանձնաժողովի) կողմից 2017 թվականի նոյեմբերի 29-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 23-րդ գլխի 126 կետով, 16-րդ գլխով և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի զ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 5,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 483,230 (չորս հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր երեսուն) հատ լրացուցիչ տեղաբաշխված սովորական անվանական բաժնետոմսերը թույլատրել առևտրին ազատ (C) շուկայում, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական առևտուրը և ռեպո գործարքների կնքումը:
2. Սահմանել, որ ազատ (C) շուկայում համարվում են առևտրին թույլատրված Ընկերության ընդհանուր քանակով 1,760,731 (մեկ միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար յոթ հարյուր երեսունմեկ) հատ սովորական անվանական բաժնետոմսեր:
3. Հանձնարարել «Բորսայական ծառայությունների դեպարտամենտ»-ին՝ սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Ընկերությանը, ինչպես նաև որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի դեկտեմբերի 5-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**

«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ • ՀՀ, Երևան 0010, Մհեր Մկրտչյան 5բ • www.nasdaqomx.am
հեռ.՝ +374 10 543 321 • ֆաքս՝ +374 10 543 321 լր 135 • էլ. փոստ՝ info@nasdaqomx.am